

և զուտ երեակայական ուրուատեսիլների անձնատուր է, որ ուրիշ կանոն չի ճանաչում՝ քան բնական գրգիռներն ու ազդումները, ուրիշ կրօն չի դաւանում՝ քան բնական միամիտ հաւատքը, որ յօժարամիտ հեթանոսական է. իսկ յաճախ՝ նա և անբարոյական. մի խօսքով այն Անգլիան՝ ինչպէս որ նկարագրել են Բէն - Ջոնսօն, Թոմին, Ֆլետչեր, Շեքսպիր, Սպէնսէր և միւս բազմաթիւ բանաստեղծների փաղանդը՝ որ այդ հոյի վերայ է ընթացել յընթացս յիսուն ամաց. միւս՝ որ գործնական կրօնի հիմքը ձգեց, թափուր էր բնազանցական կարողութիւնից, հոգով ու մարմնով ընկլմած էր քաղաքականութեան էնեկիրներում, կարգասէր էր և հակամէտ էր աւելի չափաւոր՝ առողջադատ՝ հանրօգուա՝ նեղ կարծիքների. որ գովում է ընտանեկան առաքինութիւնները, զինուել է բարոյական խստապատուէր խըրատներով և կաշկանդուել այդ խրատների մէջ, որ իւր նուիրական զբաղմունք է գարձուցել վերին աստիճան զօրութեան, ճոխութեան և ազատութեան հասուցած՝ արձակ շարադրութիւնը: Միլտոնի շարադրութեանց ոճը և գաղաքարները պէտք է համարուին գրականական յիշատակարաններ. նոցա մէջ ամիոփուած է անցեալը, նոքա կանխում են ապագան. այնպէս որ այդ մի երկասիրութեան մէջ կարելի է կարդալ շատ դարերի և ամբողջ ազդի կրած վիճակներն ու զգացումները:

Ս. ՄԱՆԴԻՆԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ

Նորին Վեհափառութիւն Տ. Տ. Մակար Սրբազնագոյն Կաթոլ-զիկոս ամենայն Հայոց բարեհաճեցաւ ամսոյս 16-ին Բիւրականի ամարանոցից վերադառնալ ի Ս. Էջմիածին երեկոյեան ժամից յետոյ:

Բարեպաշտուհի տիկին Եւայ Յարութիւնեան Մանուէլեանց Բագուեցի նուիրել է մի հարիւր ըսւբլի Մայր Յաճարի վերանորոգութեան ի յիշատակ իւր ամենսին Գրիգորի:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

Յուլիս 1 Ա. Այնօդն հիմնուելով Վրաստանի և Խմբէժի Հայոց վիճակային կոնսիստորիայի յայտարարութեան վերայ համար 6469 ի 26 Դեկ. 1887 ամի, թոյլատրեց նմին գործադրել իւր որոշումն, այն է Ախալցխայ քաղաքի Ս. Վարդանանց եկեղեցւոյ նախկին երեցփոխան Աղէքսանդրն Բօրակչեան ենթարկել քաղաքական դատարանի, և պահանջել նորանից եկեղեցւոյ հաշիւն և գոյքն որ զլանում է յանձնել նորոգ երեցփոխանին: